ԽԱՉԱՏՈՒՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Հնագիտական բնույթի մեծարժեք նյութերի շարքում Մայր Աթոռի թանգարանում հավաքվել են ինչպես հին ու միջնադարյան, այնպես էլ նոր և նորագույն ժամանակներին վերաբերող մետաղյա դրամներ: Դրանք իրենց պատկերագրության տվյալներով արժանի են հատուկ ուշադրության:

Ժողովածուի դրամներից ամենահինը վերաբերում է մ. թ. ա. Ե դարին, ամենանորը՝ մեր օրերին: Աշխարհագրական առումով այդ դրամները թողարկվել են Միջերկրականի, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրներում:

Հին շրջանի դրամները ներկայացնում են հունական քաղաքակրթության դասական և առավելապես հելլենիստական պատկերագրության բնորոշ օրինակները՝ դրվագված Հունաստանի և Փոքր Ասիայի վաճառաշահ քաղաքներում:

Հելլենիստական խմբի դրամների վրա հստակորեն պահպանվել են հեթանոսական դիցարանի գրեթե բոլոր նշանավոր կերպարները՝ նրանց պաշտամունքին բնորոշ նշաններով: Հավաքված են ոսկյա, արծաթյա, պղնձյա դրամական միավորներ. ստատերներ, տետրադրախմաներ, դիդրախմաներ, դրախմաներ և քաղկոսներ՝ թողարկված ատտիկյան կշռային չափերի տվյալներով:

Հելլենիստական դրամների շարքում կան Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյան առանձին միապետների գահակալության տարիներին թողարկված դրամներ:

Նշանակալից խումբ են կազմում հռոմեական ծագում ունեցող դրամները՝ թողարկված ինչպես հանրապետության շրջանում, այնպես էլ կայսրության ժամանակներում: Հանրապետական դրամները մեծամասնությամբ արծաթյա «դենար» կոչված միավորներից են. Ռոմայի, Վիկտորիայի, Մարսի, Յուպիտերի և առասպելական երկվորյակների պատկերներով ու լատիներեն արձանագրություններով՝ թողարկված մ. թ. ա. Բ և Ա դարերում:

Հռոմի կայսերական դրամները ներկայացնում են ոսկյա, արծաթյա և պղնձյա միավորներ, որոնց վրա, բացի դիցական իմաստի պատկերներից, պահպանվել են Օկտավիանոս, Ներոն, Դոմիցիանոս, Տրայանոս, Անտոնինոս Պիոս, Մարկոս Ավրե-

---

* Վեհափառ Հայրապետի գահակալության անցնող 21 տարիների ընթացքում, Նրա հոգածու նախաձեռնությամբ և կարգադրությամբ, Մայր Աթոռում ստացվել ու խնամքով պահվել են բազում ձեռագրեր, տարբեր բնագավառներին պատկանող հայ եկեղեցական արվեստի՝ նկարչության, քանդակագործության, ոսկերչության, գորգագործության և հնագիտական այլ նյութեր, որոնք ամբողջացնում են մեր ժողովրդի դարավոր նյութական մշակույթի հարուստ գանձարանը:

Հնագիտական մեծարժեք այդ գանձերի շարքում կարևոր տեղ են գրավում նաև Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին Մայր Աթոռի թանգարանում հավաքված հին ու միջնադարյան, նոր ու նորագույն ժամանակներին վերաբերող հայ և օտար դրամների նմուշները, որոնց մասնագիտական նկարագրությունն ու ցանկը սույն ուսումնասիրության մեջ ներկայացնում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական գծով փոխ-տնօրեն և դրամագիտության բաժնի վարիչ Խ. Ա. Մուշեղյանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

լիոս, Կոմմոդոս կայսրերի և նրանց հաջորդների դիմաքանդակները: Դրանք լայնորեն տարածված են եղել հռոմեական տիրակալության երկրներում:

Ուշագրավ են նաև կայսրության անկման շրջանին վերաբերող, այսպես կոչված, «ուշ հռոմեական» կամ «վաղ բյուզանդական» դրամները: Վերջիններս ներկայացնում են Դ և Ե դարերում թողարկված տարբեր դրամական միավորներ:

Եթե նկատի ունենանք, որ այսօրվա վիճակով կովկասյան թանգարանները հարուստ չեն ուշ շրջանի հռոմեական դրամներով, ապա Մայր Աթոռի ժողովածուն նշմարելի չափով գալիս է լրացնելու այդ բացը:

Նախաքրիստոնեական Հռոմի դարավոր ախոյան հանդիսացող Պարթևական թագավորությունը ներկայացված է Արշակունյաց տոհմի գահակալներ Միհրդատ, Որոդես, Սանատրուկ, Վարդան, Վաղարշ և այլոց դրախմաներով, որոնց վրա, արքայական պատկերներից բացի, պահպանվել են նրանց տիտղոսների հունարեն արձանագրությունները: Պարթևական արքայական դիմաքանդակներով և նրանց դրամների վրա դրոշմված հունարեն արձանագրություններով արտացոլված են իրանական և հունական առնչությունները հելլենիստական դարաշրջանին բնորոշ դրամների պատկերագրության մեջ:

Արշակունյաց արքաները դրամների վրա պատկերված են մորուքավոր դեմքերով, մի երևույթ, որը հազվադեպ էր բուն հունական աշխարհում: Դժբախտաբար հայոց Արտաշեսյան թագավորությունը ներկայացված է ընդամենը մեկ դրախմայով, որը թողարկված է Տիգրան Մեծի գահակալության տարիներին, նրա «արքայից արքա» տիտղոսի հունարեն արձանագրությամբ:

Ժողովածուն իր մեջ պարունակում է նաև առանձին նմուշներ սասանյան դրախմաներից, որոնք թողարկված են Գ և Դ դարերում Շապուհ և Ներսես արքաների պատկերներով: Կան նաև դրախմաներ, որոնք թողարկված են Իրանում Զ և Է դարերում Խոսրով Անուշիրվանի և Խոսրով Փարվեզի պատկերներով ու նրանց անունների պահլավերեն արձանագրություններով: Սասանյան այդ դրամները լայն տարածում են ունեցել հայկական քաղաքներում և ճանաչված ու ընդունված են եղել միջազգային շուկայում:

Ժողովածուն օժտված է նաև ԺԱ դարին վերաբերող ոսկյա և պղնձյա բյուզանդական դրամներով: Վերջիններս վերաբերում են առավելապես Կոստանդինոս Դուկասի և Ռոմանոս Դիոգենեսի գահակալության տարիներին:

Քրիստոնեական պատկերագրության այդ դրամները հազվագյուտ նմուշներ չեն: Դրանցից բազմաթիվ օրինակներ պահվում են աշխարհի բոլոր խոշոր թանգարաններում:

Պատմության արաբական ժամանակներին են վերաբերում ժողովածուի օմայան և աբբասյան դրամները՝ թողարկված Ը և Ժ դարերում Սիրիայի և Իրաքի վաճառաշահ քաղաքներում, մասնավորապես Դամասկոսում, Վասիտում և Բաղդադում:

Հայաստանի պատմության համար ուշագրավ են նաև ժողովածուի աբբասյան պղնձյա դրամների այն նմուշները, որոնց դրվագումը կատարվել է հայոց Դվին և Պարտավ քաղաքներում: Քանակապես շատ չնչին չափով ժողովածուում կան նաև սելջուկյան ու մոնղոլական դրամներ: Սելջուկյան դրամներից պահպանվել են Իլդեգիզյան աթաբեկների դրամները, որոնք ԺԲ և ԺԳ դարերում շրջանառություն ունեին Անդրկովկասի քաղաքներում: Դրանք բացառապես պղնձյա դրամներ են և այդ ժամանակներում ունեցել են վարկային նշանակություն՝ արծաթին փոխարինելու համար:

Մոնղոլական դրամների շարքից արժեքավոր են քրիստոնեական հավատի տեսակետից արաբերեն արձանագրություններով և խաչի նշանով թողարկված դրամները, որոնց դրվագումը կատարվել է ԺԳ դարի 80-ական թվականներին Հուլաղույանների տիրակալության այն քաղաքներում, ուր բնակչությունը քրիստոնյա է եղել:

Ժողովածուի պարունակության ամենաստվար խումբը կազմում են Կիլիկիայի հայկական դրամները, որոնք ներկայացնում են Կիլիկիայի հայոց թագավորության գրեթե բոլոր գահակալների դրամական միավորները՝ իրենց պատկերագրության մանրամասնություններով: Կիլիկյան դրամների այս հարուստ շարքը Մայր Աթոռին նվիրել է դրամագետ ամերիկահայ Զարեհ Պտուկյանը: Ընդհանրապես Կիլիկիայի հայկական դրամների ժողովածուները պահվում են Մխիթարյան թանգարաններում: Սակայն Եվրոպայի, Ամերիկայի, Մերձավոր Արևելքի շատ խոշոր թանգարաններ չեն կարող ներկայացնել մեսրոպատառ դրամների այն բովանդակությունը, որն այսօր ունի Մայր Աթոռի թանգարանը:

Ժողովածուի կիլիկյան դրամների նշանակալից մասը վերաբերում է ԺԳ դարին: Քանակային այդ հարաբերակցությունը

պատահականություն չէ, այլ օրինաչափական արտացոլումն է գոյություն ունեցող վիճակի:

Կիլիկիայի հայկական թագավորությունն իր գոյության սկզբնական շրջանում դրամներ է թողարկել ավելի շատ, քան վերջին շրջանում: Լևոն Ռուբենյանի գահակալության տարիներին թողարկված դրամները շրջանառության մեջ են եղել ոչ միայն ԺԳ դարի սկզբին, այլև այդ դարի վերջին և ԺԴ դարի սկզբին:

Ժողովածուն հարուստ է նաև Իրանի սեֆյան, կաջարյան և աֆշարյան շահերի անուններով թողարկված արծաթյա ու պղնձյա դրամներով: Դրանց հետ միասին կան նաև Երևանում թողարկված ԺԷ և ԺԸ դարերում պղնձյա դրամներից առանձին նմուշներ: ԺԷ դարի հայ-վրացական հարաբերությունների համար ուշագրավ են պարսկերեն արձանագրություններով Թբիլիսիում թողարկված արծաթյա ու պղնձյա դրամները: Վրացական դրամների շարքում կան նաև արծաթ դրամներ՝ վրացերեն արձանագրություններով, դրվագված արդեն ռուսական տիրապետության ժամանակներում:

Ժողովածուի ուշ միջնադարյան դրամների շարքում կան ինչպես օսմանյան, այնպես էլ ռուսական կայսրությունների դրամական միավորներից առանձին նմուշներ: Քանակապես դրանք շատ չեն, սակայն ներկայացնում են ԺԸ և ԺԹ դարերում Հայաստանում և հարևան երկրներում տարածված մետաղյա դրամների ամենաբնորոշ օրինակները: Ուշագրավ են նաև արևմտաեվրոպական և ամերիկյան երկրների դրամները, որոնք վերաբերում են ինչպես միջնադարին, այնպես էլ նոր և նորագույն ժամանակներին:

Այսպիսով, Մայր Աթոռի դրամագիտական ժողովածուն իր պարունակության հիմնական տվյալներով արտացոլում է մի կողմից Հայաստանի քաղաքական պատմության գլխավոր շրջանները, մյուս կողմից՝ Մայր Աթոռի միջազգային կապերը հայկական գաղութների հետ:

Առաջիկայում ժողովածուի հարստացումը հնարավորություն կընձեռնի դրամագիտական տվյալների հիման վրա դատելու պատմության, ժամանակագրության, արվեստի, առանձին թագավորական տոհմերի ծագումնաբանության և շատ այլ պատմական հարցերի մասին:

Ստորև ներկայացնում ենք ժողովածուի ընտիր դրամների դասակարգված ցուցակը ժամանակագրական կարգով:

ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Ոսկի

1. Ստատեր. Լիսիմաքոսի և Աթենասի պատկերներով, թողարկված մ. թ. ա. 321—280 թթ.:
2. Ստատեր. Պերսես թագավորի և արծվի պատկերներով, միապետի անվան հունարեն արձանագրությամբ, թողարկված Մակեդոնիայում մ. թ. ա. 178—168 թթ.:

Արծաթ

3. Ստատեր. տղամարդու և կնոջ պատկերներով, թողարկված Մակեդոնիայում մ. թ. ա. 480 թ.:
4. Տետրադրախմա. Հերմեսի և այծյամի պատկերներով, թողարկված Թրակիայում, մ. թ. ա. 450—400 թթ.:
5. Դիդրախմա. Աթենասի և ցուլի պատկերներով, թողարկված Լուկիանիայում, մ. թ. ա. 400—350 թթ.:
6. Ստատեր. արծվի և առյուծի պատկերներով, թողարկված Պելոպոնեսում, մ. թ. ա. 400—323 թթ.:
7. Ստատեր. արամերեն գրերով Բահաղի, առյուծի և եղնիկի պատկերներով, թողարկված Կիլիկիայում (Տարսոն) մ. թ. ա. 361—333 թթ.:
8. Ստատեր. արամերեն գրերով, քայլող առյուծի և գահին բազմած Բահաղի պատկերներով, թողարկված Կիլիկիայում Մազայոսի իշխանության տարիներին, մ. թ. ա. 361—333 թթ.:
9. Ստատեր. Աթենասի և բուի պատկերներով, թողարկված Կիլիկիայի Տարսոն քաղաքում մ. թ. ա. 361—333 թթ.:
10. Տետրադրախմա. Ալեքսանդր Մակեդոնացու և Զևսի պատկերներով, միապետի անվան հունարեն արձանագրությամբ, թողարկված մ. թ. ա. 336—323 թթ.:

11—13. Տետրադրախմա. նույն պատկերագրությամբ, ինչպես նախորդը, բայց դրվագված տարբեր փորագրության կնիքներով, 3 հատ:

14—Դրախմա. Ալեքսանդր Մակեդոնացու և Զևսի պատկերներով, միապետի անվան հունարեն արձանագրությամբ և արևի պաշտամունքի նշաններով, թողարկված մ. թ. ա. 336—323 թթ.:

15—19. Դրախմա. պատկերագրության նույն տվյալներով, ինչպես նախորդը, բայց դրվագված տարբեր կնիքներով, 5 հատ:

20. Տետրադրախմա. Ալ. Մակեդոնացու և

Զևսի պատկերներով, միապետի անվան հունարեն արձանագրությամբ, թողարկված Եգիպտոսում մ. թ. ա. 334—300 թթ.:

21. Դրախմա. Զևսի պատկերով և Ախեյան լիգայի նշանով, թողարկված մ. թ. ա. Գ—Բ դարերում:
22. Տետրադրախմա. Պերսեա թագավորի և արծվի պատկերներով, միապետի անվան հունարեն գրությամբ, թողարկված Մակեդոնիայում մ. թ. ա. 178—168 թթ.:
23. Տետրադրախմա. Դիանայի պատկերով, Հերակլեսի պաշտամունքային նշանով և հունարեն արձանագրությամբ, թողարկված Մակեդոնիայում մ. թ. ա. 158—149 թթ.:
24. Տետրադրախմա. դիցական իմաստի պատկերներով և հունարեն արձանագրությամբ, թողարկված Թրակիայում մ. թ. ա. 148 թ.:
25. Տետրադրախմա. նույն պատկերագրությամբ, ինչպես նախորդը, բայց թողարկված Մակեդոնիայում մ. թ. ա. Բ դարում:

Պղինձ

26. Քաղկոս. Լիսիմաքոսի և Աթենասի պատկերներով: Ուշ ժամանակների ընդօրինակություն:

ՍԵԼԵՎԿՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Արծաթ

27. Տետրադրախմա. Ալեքսանդր Բալասի և Զևսի պատկերներով, միապետի անվան ու տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Սիրիայում մ. թ. ա. 150—145 թթ.:
28. Տետրադրախմա. Տրիփոնի և միապետի անվան հունարեն արձանագրությամբ, թողարկված Սիրիայում մ. թ. ա. 142—139 թթ.:
29. Տետրադրախմա. Փիլիպոս Փիլադելփոսի և Զևսի պատկերներով, միապետի անվան և տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Անտիոքում մ. թ. ա. 92—83 թթ.:
30. Տետրադրախմա. Ձիու և խոզի պատկերներով, հունարեն Տրիոն գրությամբ, թողարկված մ. թ. ա. Բ—Ա դարերում:

Պղինձ

31. Քաղկոս. Դեմետրիոս Սոտերի և առատության դիցուհու պատկերներով, միապետի անվան հունարեն արձանագրությամբ, թողարկված Սիրիայում մ. թ. ա. 162—150 թթ.:
32. Քաղկոս. Անտիոքոս Գրիպոս և Զևսի պատկերներով, միապետի անվան ու տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Սիրիայում մ. թ. ա. 126—96 թթ.:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԾՐՋԱՆ

Արծաթ

33. Դենար. Ռոմայի և առասպելական երկվորյակների պատկերներով Մարկոս Ատիլիոս Սարանոսի անվան լատիներեն արձանագրությամբ, թողարկված Հռոմում մ. թ. ա. 145—138 թթ.:
34. Դենար. դիցուհի Ռոմայի, առասպելական երկվորյակների (ձիավոր) պատկերներով Գայուս Ցունիուսի անվան լատինատառ արձանագրությամբ, թողարկված մ. թ. ա. 145—138 թթ.:
35. Դենար. դիցուհի Ռոմայի և հաղթության երկձի մարտակառքի պատկերներով, Պ. Կոռնելիուս Սուլլայի անվան լատինատառ արձանագրությամբ, թողարկված Հռոմում մ. թ. ա. 145—138 թթ.:
36. Դենար. Ռոմայի և Մարսի քառաձի մարտակառքի պատկերներով, Լուցիուս Տրեբանոսի անվան լատինատառ արձանագրությամբ, թողարկված Հռոմում մ. թ. ա. 133—126 թթ.:
37. Դենար. Ռոմայի և առասպելական երկվորյակների (ձիավոր) պատկերներով, Լուցիուս Ցունիուսի անվան գրությամբ, թողարկված Հռոմում մ. թ. ա. 133—126 թթ.:
38. Դենար. Ռոմայի և հաղթանակի (քառաձի մարտակառք) պատկերներով, ինչպես նաև Լուցիուս Օպեիմիուսի անվան լատինատառ արձանագրությամբ, թողարկված Հռոմում մ. թ. ա. 125—120 թթ.:
39. Դենար. Ռոմայի, ձիավոր ռազմիկի, պարտված թշնամու և պսակաբեր Վիկտորիայի պատկերներով, ինչպես նաև Գայուս Սերվիլիուսի անվան լատիներեն գրությամբ, թողարկված Հռոմում մ. թ. ա. 125—120 թթ.:
40. Դենար. Ռոմայի և Ցուպիտերի չորս ձիերով լծված արշավող մարտակառքի պատկերներով, ինչպես նաև Ք. Ֆաբիուսի անվան լատիներեն գրությամբ, թողարկված Հռոմում մ. թ. ա. 109 թ.:
41. Դենար. պատանի Ցուպիտերի և երեք ձիերով լծված մարտակառքը վարող Մարսի պատկերներով, ինչպես նաև Գայուս Լիկինիուս Մակերի անվան

Զևսի պատկերը Ալեքսանդր Մակեդոնացու արծաթ դրամի վրա (Մ. թ. ա. Դ դար)

Աթենասի պատկերը արծաթ դրամի վրա (Մ. թ. ա. Դ դար)

Թրակիայի միապետ Լիսիմաքոսի դիմաքանդակը և ռազմի դիցուհի Աթենասի պատկերը ոսկյա դրամի վրա (Մ. թ. ա. Դ—Գ դարեր)

լատիներեն համառոտագրությամբ, թողարկված Հռոմում մ. թ. ա. 83 թ.:

42. Անանուն դեմար, երկդեմ Յանուսի, հաղթության կոթողի և Աթենասի պատկերներով, թողարկված մ. թ. ա. Ա դարում:

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Ոսկի

43. Աուրեուս. Տիբերիոս կայսեր և Ռոմայի պատկերներով, թողարկված Հռոմում 14—37 թթ.:

44. Աուրեուս. Տիբերիոս կայսեր և դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 14—37 թթ.:

45. Աուրեուս. Տիբերիոս կայսեր և Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 14—37 թթ.:

46—47. Աուրեուս. Ներոն կայսեր և Յուպիտերի պատկերներով, թողարկված Հռոմում 54—68 թթ., տարբեր կնիքներով դրվագված, 2 հատ:

Արծաթ

48. Դեմար. Օգոստոս Օկտավիանոսի և նրա որդեգիրներ Գայուսի և Լուցիուսի պատկերներով, թողարկված մ. թ. ա. 2—մ. թ. 11 թ.:

49—53. Դեմար. Օգոստոս Օկտավիանոսի և նրա որդեգիրներ Գայուսի և Լուցիուսի պատկերներով, լատինատառ արձանագրությամբ, մանրամասնությամբ, ինչպես նախորդը, բայց դրվագված տարբեր կնիքներով, 5 հատ:

54. Դեմար. Ներոն կայսեր և Մարսի պատկերներով, թողարկված Հռոմում 64—68 թթ.:

55. Դեմար. Դոմիցիանոս կայսեր և Ռոմայի պատկերներով, թողարկված 81—96 թթ.:

56. Դեմար. Տրայանոս կայսեր և Վիկտորիայի պատկերներով, թողարկված 98—117 թթ.:

57. Դեմար. Տրայանոս կայսեր և Առատության դիցուհու պատկերներով, թողարկված 98—117 թթ.:

58. Դեմար. Տրայանոս կայսեր և պսակաբեր Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 98—117 թթ.:

59. Դեմար. Տրայանոս կայսեր և պսակաբեր Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 98—117 թթ.:

60. Դեմար. Տրայանոս կայսեր և նրա ձիավոր պատկերներով, թողարկված Հռոմում նույն տարեթվերին:

61. Դեմար. Ադրիանոս կայսեր և դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 117—138 թթ.:

62. Դեմար. Անտոնինոս Պիոս կայսեր և առատության դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 138—161 թթ.:

63. Դեմար. Անտոնինոս Պիոս կայսեր կիսադեմ և ողջ հասակով կանգնած պատկերներով, թողարկված Հռոմում 138—161 թթ.:

64. Դեմար. Անտոնինոս Պիոս կայսեր և Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 138—161 թթ.:

65. Դեմար. Անտոնինոս Պիոս կայսեր և ծաղկունքի դիցուհու պատկերներով, թողարկված նույն տարեթվերին:

66. Դեմար. Անտոնինոս Պիոս կայսեր և պտղաբերության դիցուհու պատկերներով, թողարկված 138—161 թթ.:

67. Դեմար. Անտոնինոս Պիոս կայսեր և արդարադատության դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 138—161 թթ.:

68. Դեմար. Անտոնինոս Պիոս կայսեր և հռոմեական արծվի պատկերներով, թողարկված Հռոմում 138—161 թթ.:

69. Դեմար. Ֆաուստինա ավագ կայսրուհու և պտղաբերության դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում:

70. Դեմար. Մարկոս Ավրելիոս կայսեր և ռազմի աստված Մարսի պատկերներով, թողարկված Հռոմում 161—180 թթ.:

71. Դեմար. Մարկոս Ավրելիոս կայսեր և առատության դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 161—180 թթ.:

72. Դեմար. Մարկոս Ավրելիոս կայսեր և հաղթաբեր Մարսի պատկերներով, թողարկված Հռոմում 161—180 թթ.:

73. Դեմար. Ֆաուստինա կրտսեր կայսրուհու և դիցուհի Ռոմայի պատկերներով, թողարկված Հռոմում 146—175 թթ.:

74. Դեմար. Ֆաուստինա կրտսեր կայսրուհու, դիցուհու և պարտված թշնամու (ծնկաչոք) պատկերներով:

75. Դեմար. Ֆաուստինա կրտսեր կայսրուհու և հաղթության կոթողի պատկերներով:

76. Դեմար. Ֆաուստինա կրտսեր կայսրուհու և հաղթության կոթողի պատկերներով, թողարկված Հռոմում 146—175 թթ.:

77. Դեմար. Սեպտիմոս Սևերոս կայսեր և թևավոր հաղթանակի պատկերներով, թողարկված Հռոմում 193—211 թթ.:

78. Դեմար. թողարկված Սեպտիմոս Սեվերոս կայսեր և առատության դիցուհու պատկերներով, թողարկված 193—211 թթ.:

79. Դեմար. Յուլիա Դոմնա կայսրուհու և

դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 193—211 թթ.:

80. Դենար. Լուցիլլա կայսրուհու և պսակի պատկերներով, լատիներեն արձանագրությամբ, թողարկված Հռոմում 182 թ.:

81. Դենար. Պերտինաքս կայսեր և թևավոր Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 193 թ.:

82. Դենար. Կոմոդոս կայսեր և թևավոր Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 177—192 թթ.:

83. Դենար. Կոմոդոս կայսեր և Ռոմայի պատկերներով, թողարկված Հռոմում 177—192 թթ.:

84. Դենար. Կոմոդոս կայսեր և առատության դիցուհու պատկերներով, թողարկված նույն թվականներին:

85. Դենար. Յուլիա Դոմնայի կիսադեմ և ողջ հասակով կանգնած պատկերներով, թողարկված Հռոմում 193—211 թթ.:

86. Դենար. Յուլիա Դոմնայի և Պիետասի պատկերներով, թողարկված Հռոմում 193—211 թթ.:

87. Դենար. Գետայի, նրա գահաժառանգի և կայսրուհու պատկերներով, թողարկված Հռոմում 209—212 թթ.:

88. Դենար. Գորդիանոս Գ կայսեր և Ֆլորա դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 238—244 թթ.:

89. Անտոնինիան. Ավրելիանոս կայսեր և նրա կնոջ պատկերներով, թողարկված Հռոմում 270—275 թթ.:

90. Անտոնինիան, Ավրելիանոս կայսեր և հաղթության դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 270—275 թթ.:

91. Անտոնինիան. Ավրելիանոս կայսեր և նրա պսակադրության պատկերներով, թողարկված նույն թվականներին:

92. Անտոնինիան. Ավրելիանոս կայսեր և պսակադիր դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում նույն թվականներին:

93. Անտոնինիան. Ավրելիանոս կայսեր և Հելիոսի պատկերներով, թողարկված Հռոմում նույն թվականներին:

94. Անտոնինիան. Կարինուս կայսեր և Ռոմայի պատկերներով, թողարկված Հռոմում 283—285 թթ.:

95. Անտոնինիան. Կարաուսիուս կայսեր և առատության դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 287—293 թթ.:

96—97. Անտոնինիան. Կարաուսիուս կայսեր, դիցուհի Ռոմայի և երկվորյակներին սնող գայլի պատկերներով, թողարկված Հռոմում 287—293 թթ., 2 հատ, տարբեր կնիքներով դրվագված:

98. Անտոնինիան. Դիոկլետիանոս կայսեր, ռազմի աստված Մարսի և հաղթության կոթողի պատկերներով:

99. Անտոնինիան. Դիոկլետիանոս կայսեր և Վիկտորիա դիցուհու պատկերներով, թողարկված Հռոմում 284—305 թթ.:

100. Անտոնինիան. Գալերիուս կայսեր և Մարսի պատկերներով, թողարկված Հռոմում 305—311 թթ.:

101. Անտոնինիան. Մաքսիմիանուս կայսեր և պսակաբեր Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 286—310 թթ.:

Պղինձ

102. Ֆոլիս. Կոստանտիուս կայսեր և Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 305—306 թթ.:

103. Ֆոլիս. Սևերուս Երկրորդ կայսեր, Մարսի և Վիկտորիայի պատկերներով, թողարկված Հռոմում 306—307 թթ.:

104. Ֆոլիս. Գալերիուս կայսեր, Վիկտորիայի և հաղթության կոթողի պատկերներով, թողարկված Հռոմում 205—211 թթ.:

105—106. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին կայսեր և զույգ Վիկտորիաների պատկերներով, թողարկված Հռոմում 307—337 թթ.:

107. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին կայսեր և քառաձի մարտակառքի պատկերներով, թողարկված Հռոմում 307—337 թթ.:

108. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին (մեծ) կայսեր և մարտակառքի պատկերներով, թողարկված Հռոմում նույն թվականներին:

109. Ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին կայսեր և գոտեմարտող երկու ռազմիկների պատկերներով, թողարկված Հռոմում նույն թվականներին:

110. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին և երկու հիզակավոր ռազմիկների պատկերներով, թողարկված նույն թվականներին:

111. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին (մեծ) կայսեր, երկու հիզակավոր ռազմիկների և նրանց միջև Հռոմեական դրոշի պատկերներով, թողարկված նույն թվականներին:

112. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին (մեծ) կայսեր կիսադեմ և ամբողջական պատկերներով, թողարկված նույն թվականներին:

113. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին

Մակեդոնիայի թագավոր Պերսեսի դիմաքանդակը
նրա արծվազարդ ոսկյա դրամի վրա
(Մ. թ. ա. Բ դար)

Սելևկյան Աղեքսանդր Բալասի դիմաքանդակը
արծաթ դրամի վրա (Մ. թ. ա. Բ դար)

Հայոց Տիգրան թագավորի դիմաքանդակը
ոսկյա դրամի վրա

(մեծ) կայսեր և զինված հեծյալների պատկերներով, թողարկված նույն թվականներին:

114. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին (մեծ) կայսեր կիսադեմ և ողջ հասակով կանգնած պատկերներով, թողարկված նույն թվականներին:

115. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին (մեծ) կայսեր և երկու ռազմիկների պատկերներով, թողարկված նույն թվականներին:

116. Կես ֆոլիս. Կոնստանտինուս Առաջին (մեծ) կայսեր և ռազմիկի պատկերներով, թողարկված նույն թվականներին:

117. Ֆոլիս. Լուցինիուս Առաջին կայսեր և ռազմի աստված Մարսի պատկերներով, թողարկված 308—324 թթ.:

118. Կես ֆոլիս. Լուցինիուս Առաջին կայսեր և Հելիոսի պատկերներով, թողարկված նույն թվականներին:

119. Ֆոլիս. Լուցինիուս Առաջին կայսեր կիսադեմ և ողջ հասակով կանգնած, պատկերներով, թողարկված նույն թվականներին:

120. Կես ֆոլիս. Լուցինիուս Առաջին կայսեր և ամրոցի պատկերներով, թողարկված նույն թվականներին:

121. Կես ֆոլիս. Կրիսպուս կայսեր կիսադեմ և ողջ հասակով կանգնած պատկերներով, թողարկված 317—326 թթ.:

122. Կես ֆոլիս. Կոնստանս կայսեր և Վիկտորիայի պատկերներով, թողարկված 337—350 թթ.:

123. Կես ֆոլիս. Կոնստանս կայսեր պատկերով և լատիներեն արձանագրությամբ, թողարկված 337—350 թթ.:

124. Կես ֆոլիս. Կոնստանտիուս Երկրորդ կայսեր կիսադեմ և ողջ հասակով կանգնած պատկերներով, թողարկված 337—361 թթ.:

125. Կես ֆոլիս. Կոնստանտիուս Երկրորդ կայսեր և Վիկտորիայի պատկերներով, թողարկված 337—361 թթ.:

126. Կես ֆոլիս. Կոնստանտիուս Երկրորդ կայսեր և նիզակ կրող զույգ ռազմիկների պատկերներով, թողարկված նույն թվականներին:

127. Կես ֆոլիս. Կոնստանտիուս Երկրորդ և կայսրության դրոշը պահող զինվորների պատկերներով:

128. Ֆոլիս. Կոնստանտիուս Երկրորդ կայսեր պատկերներով, թողարկված նույն թվականներին:

129. Կես ֆոլիս. Կոնստանտիուս Երկրորդ կայսեր, նիզակ կրող զույգ ռազմիկների և հնգաթև աստղի պատկերներով, թողարկված նույն թվականներին:

130. Կես ֆոլիս. Յուլիանուս Երկրորդ կայսեր և Վիկտորիայի պատկերներով, թողարկված 360—363 թթ.:

131. Ֆոլիս. Յուլիանուս Երկրորդ կայսեր և ոսկե գլիկի պատկերներով, թողարկված 360—363 թթ.:

132. Կես ֆոլիս. Պրոկոպիոս կայսեր պատկերով և պսակավոր շրջանակով, լատիներեն արձանագրությամբ, թողարկված 365—366 թթ.:

133. Կես ֆոլիս.Պրոկոպիոս կայսեր պատկերով և ջնջված արձանագրությամբ:

134. Ֆոլիս. Արկադիուս կայսեր կիսադեմ և ռազմի տարազով կանգնած պատկերներով, թողարկված 383—408 թթ.:

135. Սեստերս. մաշված պատկերով և հունատառ արձանագրությամբ, թողարկված Սիրիայում Գ դարում:

136. Սեստերս. Հռոմի կայսեր և Անտիոքի քաղաքամոր մաշված պատկերներով, թողարկված Սիրիայում Գ դարում:

137. Կես ֆոլիս. Անաստասիուս կայսեր և Վիկտորիայի պատկերներով, թողարկված 491—518 թթ.:

ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Արծաթ

138. Դրախմա. Միհրդատ Երկրորդ պարթևաց արքայի կիսադեմ պատկերով և հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում մ. թ. ա. 123—88 թթ.:

139. Դրախմա. Միհրդատ Երկրորդի կիսադեմ պատկերով (դեպի ձախ) և մաշված հունատառ արձանագրությամբ, թողարկված մ. թ. ա. 123—88 թթ.:

140—141. Դրախմա. Որոդես Առաջին պարթևաց արքայի կիսադեմ պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում մ. թ. ա. 80—77 թթ., երկու տարբեր կնիքներով դրվագված օրինակներ:

142. Դրախմա. Սանատրուկ արքայի պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում մ. թ. ա. 77—70 թթ.:

143—144. Դրախմա. Հրահատ Երրորդի կիսադեմ պատկերով (դեպի ձախ) և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում մ. թ. ա. 70—57 թթ.:

145—149. Դրախմա. Որոդես Երկրորդ

պարթևաց արքայի կիսադեմ պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում մ. թ. ա. 57—38 թթ., հինգ զույգ տարբեր կնիքներով դրվագված օրինակներ:

150—151. Դրախմա. Արտաբան Երկրորդ պարթևաց արքայի կիսադեմ պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 10—38 թթ.:

152. Դրախմա. Վարդան Առաջին պարթևաց արքայի կիսադեմ պատկերով և նրա անվան հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 40—45 թթ.:

153. Դրախմա. Գոդարզ Երկրորդ պարթևաց արքայի պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 40—51 թթ.:

154. Դրախմա. Ոնոն Երկրորդ պարթևաց արքայի հանդիպահայաց պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված մ. թ. ա. 51 թ.:

155—156. Դրախմա. Վաղարշ Երրորդ պարթևաց արքայի պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 105—147 թթ., երկու հատ տարբեր փորագրության կնիքներով դրվագված:

157. Դրախմա. Վաղաշր Չորրորդ պարթևաց արքայի պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 148—191 թթ.:

158. Դրախմա. Օսրոես Երկրորդ պարթևաց արքայի պատկերով և նրա տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 190 թ.:

ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Ոսկի

159. Դահեկան. Տիգրան Մեծ հայոց արքայի և Անտիոքի քաղաքամայր դիցուհու պատկերներով, ինչպես նաև միապետի անվան ու տիտղոսների հունարեն արձանագրությամբ, թողարկված Սիրիայում մ. թ. ա. 95—55 թթ., ընդօրինակություն:

Արծաթ

160. Դրախմա. հայոց արքա Տիգրան Մեծի և քաղաքամայր դիցուհու պատկերներով, ինչպես նաև միապետի «արքայից արքա» տիտղոսի հունարեն արձանագրությամբ, թողարկված Հայաստանում (Տիգրանակերտ) մ. թ. ա. 95—55 թթ.:

ՍԱՍԱՆՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Արծաթ

161. Դրախմա. Շապուհ Առաջին արքայի և ատրուշանի պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 241—272 թթ.: Տարբեր կնիքներով դրվագված երկու հատ:

162—163. Դրախմա. Ներսես արքայի և ատրուշանի պատկերներով, նրանց շուրջ պահլավերեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 293—303 թթ.:

164—168. Դրախմա. Շապուհ Երկրորդ արքայի, զրադաշտական ատրուշանի և վերջինիս կողքին կանգնած զինված քուրմերի պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 310—379 թթ.: Հինգ հատ, դրվագված տարբեր կնիքներով:

169. Դրախմա. Փերոզ արքայի և զրադաշտական ատրուշանի պատկերներով, պահլավերեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 457—484 թթ.:

170. Դրախմա. Կավադ արքայի և ատրուշանի պատկերներով, պահլավերեն արձանագրություններով, թողարկված Իրանում 497 թ.:

171. Դրախմա. Խոսրով Անուշիրվանի և ատրուշանի պատկերներով, արքայի անվան պահլավերեն արձանագրությամբ, թողարկված Նախճավանում միապետի գահակալության 46-րդ տարում, այսինքն 577 թ.:

172. Դրախմա. նույն պատկերագրությամբ, բայց թողարկված Իրանում Խոսրով Անուշիրվանի գահակալության 31-րդ տարում, այսինքն մ. թ. 562 թ.:

173. Դրախմա. Որմիզդ Չորրորդի և ատրուշանի պատկերներով, միապետի անվան պահլավերեն արձանագրությամբ, թողարկված Իրանում մ. թ. 580 թ.:

174. Դրախմա. Որմիզդ Չորրորդի և ատրուշանի պատկերներով, պահլավերեն արձանագրությամբ, թողարկված Իրանում 579—591 թթ.:

175. Դրախմա. Խոսրով Փարվեզի և ատրուշանի պատկերներով, թողարկված Նախճավանում արքայի գահակալության

Հռոմի կայսր Տիբերիոսի և դացուհու
պատկերները ոսկյա դրամի վրա (Ա. դարի սկիզբ)

Հռոմի կայսր Ներոնի և Յուպիտերի
պատկերները ոսկյա դրամի վրա (Ա. դար)

31-րդ տարեթվով, այսինքն մ. թ. 621 թ.:

176. Դրախմա. Խոսրով Փարվեզի և ատրուշանի պատկերներով, թողարկված Նախճավանում արքայի գահակալության 28-րդ տարում, այսինքն մ. թ. 619 թ.:

177. Դրախմա. նույն պատկերագրությամբ, բայց փողերանոցի և տարեթվի ջնջված արձանագրությամբ:

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Ոսկի

178. Սեմիս. Մարցիանուս կայսեր և խաչակիր հաղթանակի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 450—457 թթ.:

179. Սոլիդ. Փոկաս կայսեր և խաչակիր Վիկտորիայի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 602—610 թթ.:

180. Սոլիդ. Կոնստանս Երկրորդի և քրիստոնեական խաչի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 641—668 թթ.:

181. Սոլիդ. Վասիլ Առաջին և Կոնստանտին Յոթերորդ կայսրերի, ինչպես նաև Հիսուս-Քրիստոսի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 869—879 թթ.:

182—183. Նոմիզմա. Կոնստանտին Ծիրանածին կայսեր և Հիսուս-Քրիստոսի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 1025—1028 թթ.: Երկու հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

184—185. Սոլիդ. Կոնստանտին (ինն) Մոնոմախ կայսեր և Հիսուս-Քրիստոսի պատկերով, թողարկված Կ. Պոլսում 1042—1055 թթ.: 2 հատ տարբեր կնիքներով դրվագված:

186—197. Սոլիդ. Կոնստանտին Ժ Դուկաս կայսեր և Հիսուս-Քրիստոսի պատկերներով, ինչպես նաև նրանց անունների հունատառ արձանագրություններով: Հիսուս-Քրիստոսը ներկայացված է գահին բազմած տեսքով, իսկ կայսրը՝ կանգնած, մի ձեռքին ինքնակալության գավազանը բռնած, մյուսին՝ խաչազարդ գունդը: Հատաձույլն ուռուցիկ ու գոգավոր է: 12 հատ տարբեր կնիքներով դրվագված օրինակներ:

198. Սոլիդ. Ռոմանոս Դ կայսեր և նրա կնոջ՝ Եվդոկիայի, ինչպես նաև գահաժառանգների ու Հիսուս-Քրիստոսի պատկերներով, որոնց շուրջ հունարեն արձանագրված է նրանց անունները: Դրամը մաշված է, եզրին ունի օղակ: Թողարկվել է Կ. Պոլսում 1067—1071 թթ.:

199. Սոլիդ. Ռոմանոս Դ-ի, նրա կնոջ՝ Եվդոկիայի, ինչպես նաև գահաժառանգների ու Հիսուս-Քրիստոսի պատկերներով, մանրամասնությամբ նման նախորդին, բայց դրվագված տարբեր փորագրության կնիքներով:

200—203. Սոլիդ. Միքայել Է Դուկասի և Հիսուս-Քրիստոսի պատկերներով, նրանց անունների հունարեն արձանագրություններով: Հիսուս-Քրիստոսը պատկերված է գահին բազմած, հանդիպահայաց տեսքով, իսկ Միքայելը՝ կիսանդրու չափով, խաչազարդ թագով, ձեռքին ինքնակալության նշաններ, նույնպես հանդիպահայաց: Թողարկվել է Կ. Պոլսում 1071—1078 թթ.: Տարբեր կնիքներով դրվագված, չորս հատ:

204. Սոլիդ. Ալեքսիուս Առաջին Կոմնենիուս կայսեր և Հիսուս-Քրիստոսի պատկերներով: Կայսրը ներկայացված է ողջ հասակով կանգնած, իսկ Հիսուս-Քրիստոսը՝ գահին բազմած տեսքով: Պատկերների շուրջ՝ մաշված հունարեն գրություններ: Դրամը թողարկվել է Կ. Պոլսում 1081—1118 թթ.:

205—206. Սոլիդ. Հովհաննես Բ Կոմնենիուս կայսեր և Հիսուս-Քրիստոսի պատկերներով, նրանց անունների արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում 1118—1143 թթ.: Երկու տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

207. Սոլիդ. Հովհաննես Բ Կոմնենիուս կայսեր և Հիսուս-Քրիստոսի պատկերներով ու մաշված արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում 1118—1143 թթ.: Դրամը արտաքնապես ոսկեզօծված է, բայց հատաձույլը պղնձից է:

Արծաթ

208—209. Միլիարեսիա. Հերակլես կայսեր և նրա գահաժառանգ Հերակլես-Կոստանտինի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 610—640 թթ.: Տարբեր փորագրության կնիքներով դրվագված, երկու հատ:

210—211. Միլիարեսիա. Կոնստանս Բ կայսեր և քրիստոնեական խաչի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 641—662 թթ.: Երկու հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված:

Պղինձ

212. Ֆոլիս. Յուստինիանոս Ա կայսեր պատկերով և հունարեն խոշոր նշա-

նագրերով, թողարկված Կ. Պոլսում 527—565 թթ.:

213. Ֆոլիս. Յուստինուս և Սոֆիա կայսեր ու կայսրուհու պատկերներով, թողարկված Նիկոմեդիայում 565—578 թթ.:

214. Նույն պատկերագրությամբ, 40 ֆոլիս, բայց թողարկված Կ. Պոլսում 565—578 թթ.:

215. Նույն պատկերագրությամբ, բայց 20 ֆոլիս, թողարկված Թեսալոնիկայում 565—578 թթ.:

216. Ֆոլիս. Հերակլես կայսեր և նրա գահաժառանգի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 610—614 թթ.:

217. Ֆոլիս. Թեոփիլոս կայսեր պատկերով և հունարեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում 829—832 թթ.:

218. Ֆոլիս. Լևոն Զ կայսեր պատկերով և հունարեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում 886—912 թթ.:

219—220. Ֆոլիս. Վասիլ Բ Բուլղարասպան կայսեր և Հիսուս-Քրիստոսի պատկերներով և հունարեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում 976—1025 թթ.: Երկու հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված:

221—223. Ֆոլիս. Միքայել Դ կայսեր և Հիսուս-Քրիստոսի պատկերներով, ինչպես նաև նրանց անունների հունարեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում 1034—1041 թթ.: Երեք հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

224—226. Ֆոլիս. Կոնստանտին Թ Մոնոմախի, Հիսուս-Քրիստոսի և Տիրամոր պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 1042—1055 թթ.: Երեք հատ տարբեր կնիքներով դրվագված:

227—228. Ֆոլիս. Թեոդորա կայսրուհու ժամանակվա և Հիսուս-Քրիստոսի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 1055—1056 թթ.: Երկու հատ, տարբեր կնիքներով դրվագված օրինակներ:

229—230. Ֆոլիս. Կոնստանտին Ժ Դուկասի, Հիսուս-Քրիստոսի և կայսրուհու՝ Եվդոկիայի պատկերներով, թողարկված Կ. Պոլսում 1059—1067 թթ.: Երկու հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

231. Ֆոլիս. Միքայել Է Դուկասի պատկերով և մաշված հունատառ արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում 1071—1078 թթ.:

ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱԹԻ ԴՐԱՄՆԵՐ

Ա. ՕՄԱՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Արծաթ

232. Դիրհեմ. Ղուրանի 112 սուրահից և մահմեդականության բանաձևի առաջին մասից քաղված արձանագրությամբ, թողարկված Դիմեշքում (Դամասկոս) հիջրայի 85 թ.:

233. Դիրհեմ. Նույն արձանագրությամբ, բայց թողարկված Վասիտ քաղաքում հիջրայի 111 թ.:

Բ. ԱԲԲԱՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Արծաթ

234. Դիրհեմ. խալիֆ Ալ-Մահդիի անվան արձանագրությամբ, թողարկված Մեդինատ Աս-Սալամում հիջրայի 160 թ.:

235. Դիրհեմ. խալիֆ առ-Ռաղի Բիլլահի անունով, թողարկված Մեդինատ Աս-Սալամում հիջրայի 302 թ.:

236—237. Դիրհեմ. նույն արձանագրություններով, բայց ջնջված տարեթվով: Երկու հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

Պղինձ

238. Ֆելս. Էմիր Յազիտ Իբն Ուսայդի անունով, թողարկված Դվինում, հիջրայի 159 թ.:

239. Ֆելս. Ալ-Մահդի Մուհամեդի անունով, թողարկված Աղվանքում, խիստ մաշված արձանագրությամբ:

240. Ֆելս. մաշված արձանագրությամբ, թողարկված Աղվանքում Թ դարի ընկզբին:

ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Պղինձ

241. Ֆելս. Կիլիլ Ասլան Դ-ի պատկերով (ձիավոր) և նրա անվան արաբերեն արձանագրությամբ, թողարկված Իկոնիայում 1249—1265 թթ.:

242. Ֆելս. Աթաբեկ Շամս-ադ-դին Իլդեգիզի անվան արաբերեն արձանագրությամբ, թողարկված Ադրբեջանում 1137—1176 թթ.:

243—247. Ֆելս. Մուզաֆար-ադ-դին Կիզիլ Առսլանի անվան արաբերեն արձանագրությամբ, թողարկված Ադրբեջանում 1187—1191 թթ.: Հինգ հատ տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

248. Ֆելս. Իլդեգիզյան Աթաբեկ Աբու-Բեք-

րի անվան արաբերեն արձանագրությամբ, թողարկված Ադրբեջանում 1195—1210 թթ.:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Արծաթ

249—250. Դիրհեմ. ույգուրերեն և արաբերեն արձանագրություններով քրիստոնեական հավատի արաբատառ բանաձևով, ինչպես նաև խաչի նշանով, թողարկված Անդրկովկասում ԺԳ դարի վերջին: Երկու հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

251—252. Դիրհեմ. Հուլաղույան Անուշիրվան խանի անվան արաբերեն արձանագրությամբ, թողարկված Հայաստանում 1344—1354 թվերին: Երկու հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

253. Դիրհեմ. Հուլաղույան տիրակալության նշաններով, արաբերեն արձանագրությամբ, թողարկված Թավրիզում 14-րդ դարի առաջին կեսին:

Պղինձ

254—255. Ֆելս. արաբերեն մաշված արձանագրություններով, առանց տարեթվի և միապետի անվան հիշատակության, թողարկված Անդրկովկասում, 13-րդ դարի 60—70-ական թվականներին: Երկու հատ, տարբեր կնիքներով դրվագված օրինակներ:

256. Ֆելս. միապետի անվան ույգուրերեն և քրիստոնեական հավատի արաբերեն արձանագրություններով, ինչպես նաև խաչի նշանով, թողարկված 13-դարի 80-ական թվականներին:

257. Ֆելս. Հուլաղույան Աբաղա խանի անունով, խիստ մաշված արձանագրություններով, թողարկված 1284—1290 թվերին:

258. Ֆելս. Հուլաղույան Աբու-Սաիդ խանի անունով, արաբերեն ջնջված արձանագրությամբ, թողարկված 1317—1335 թվերին:

(Շարունակելի)